ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է՝ Վավերացնում եմ՝

ԱրՊՀ գիտական խորհրդում Ռեկտոր _____

Ա.Ա.Հ.

Արձանագրություն _____ _____

Ստորագրություն

«____» _____ 20__թ. «____» _____ 20__թ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԿՐԹԱԿԱՆԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ Իրավագիտություն 042101.00.6

Կրթական ծրագիր՝ Իրավագիտություն 042101.01.6

Որակավորում՝ Իրավագիտության բակալավր

Ստեփանակերտ 2020

I.«Իրավագիտություն» 042101.00.6 մասնագիտության կրթական *ծրագրի ընդհանուր բնութագիրը*

1. **Շնորհվող որակավորում՝** Իրավագիտության *բակալավր* ՝«Իրավագիտություն» մասնագիտությամբ
2. **Որակավորման աստիճանը՝** բակալավր, 6-րդ մակարդակ
3. **Ուսումնառության տևողությունը՝** *4 տարի /8 կիսամյակ/*
4. **Ուսումնառության ձևը՝** *առկա*
5. **Կրեդիտ՝** 240 *ԵԿՓՀ (տարեկան 60 ԵԿՓՀ հաշվարկով)*
6. **Ընդունելության նվազագույն պահանջ՝** միջնակարգ կրթության 3-րդ աստիճան, նախնական մասնագիտական կրթություն, միջին մասնագիտական կրթություն
7. **Ավարտական աշխատանք՝** 20ԵԿՓՀ
8. **Փորձուսուցում՝** 8ԵԿՓՀ
9. **Կրթական ծրագրի պատասխանատու ամբիոն՝** Իրավունքի ամբիոն

10. Ծրագրի բնութագիրը

Անկախության հռչակումից հետո մեր երկրում օբյեկտիվորեն առաջացել է բարձրագույն կրթությամբ իրավաբան մասնագետների կարիք և պահանջարկ: Անհրաժեշտ էր պատրաստել իրավաբաններ, ովքեր մասնագիտական գործունեություն կծավալեին նորանկախ պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում, դատախազությունում, ոստիկանությունում, գործարարության ոլորտում, փաստաբանությունում, այլ կառույցներում: 1993 թվականին ԱրՊՀ պատմաբանասիրական ֆակուլտետի կազմում ստեղծվել է փիլիսոփայության և իրավունքի ամբիոնը, որը սկսել է «Իրավագիտություն» մասնագիտությամբ ուսուցումը: Ներկայումս «Իրավագիտություն» մասնագիտությամբ կրթական ծրագիրը սպասարկում է պատմության և իրավագիտության ֆակուլտետի կազմում գործող իրավունքի ամբիոնը: Համարվում է թողարկող ամբիոն առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների համար: Ամբիոնը մյուս մասնագիտությունների գծով սովորող ուսանողների համար հաստատված ուսումնական պլանների շրջանակներում կազմակերպում է «Իրավունքի հիմունքներ» դասընթացը:

2020 թվականի հունիսից ամբիոնը ղեկավարում է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԱՀ վաստակավոր իրավաբան Գրետա Արզումանյանը:

Ծրագիրը համապատասխանում է ԼՂՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին*(ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև ԱրՊՀ առաքելությանը:*

Հիմք.

ա.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին ԼՂՀ Կառավարության որոշում N 944-Ն, 27 դեկեմբերի, 2012թ.

բ. ԱրՊՀ Ռազմավարական ծրագիր 2019-2023, ԱրՊՀ խորհրդի՝ 2019թ. մարտի 5-ի, N3 նիստի որոշում

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը 4 տարի տևողությամբ բակալավրական ծրագիր է, որի նպատակը մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով և կարողություններով զինված, ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ունեցող, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող իրավաբան մասնագետներ պատրաստելն է: Այդ նպատակն իրագործելու համար հարկավոր է իրականացնել համապատասխան կրթություն, տրամադրել անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ձևավորել իրավաբանին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և այլն:

11.Փորձուսուցման տեսակները և վայրը

Ուսումնառության ընթացքում ուսանողներն անցնում են ուսումնական (4 կրեդիտ, 4 շաբաթ), արտադրական (4 կրեդիտ, 4 շաբաթ) փորձուսուցումներ ԱՀ Ազգային ժողովում, դատարաններում, դատախազությունում, քննչական կոմիտեում, իրավապահ այլ մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում:

12.Աշխատանքային հնարավորությունը

Կրթական ծրագրի շրջանավարտը կարող է աշխատել որպես քննիչ, դատախազ, փաստաբան, դատավոր, նոտար, քաղաքացիական ծառայող, դատական դեպարտամենտում՝ դատական ծառայող, հարկադիր կատարման ծառայությունում՝ հարկադիր կատարող, մասնավոր ընկերություններում՝ իրավախորհրդատու: Կարող է զբաղեցնել այլ պաշտոններ իրավապահ և իրավապաշտպան մարմինների համակարգում, պետական կառավարման այլ օղակներում, տեղական ինքնակառավարման մարմիններում:

13.Գնահատումը

Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է գնահատման հետևյալ ձևերով՝ ավանդական ստուգարք, ավանդական քննություն, առանց եզրափակիչ գնահատման ստուգում, եզրափակիչ գնահատումովստուգում, տարբերակված ստուգարք: Գնահատման ձևի բաղադրիչները, մեթոդաբանությունը հստակորեն սահմանված են[1]: Գիտելիքի և հմտությունների գնահատման մեջ կա դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանություն, լսարանային աշխատանքի և ինքնուրույն աշխատանքների փոխկապակցված գնահատում: Գնահատման հիմնական սկզբունքը ուսանողակենտրոն մոտեցումն է:

Գնահատման համակարգը հիմնված է ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքի յուրացման արժևորման վրա: Գնահատման համակարգում կարևորվում են ուսանողների հմտությունները և կարողությունները՝ տեսությունը գործնականում օգտագործելու ունակությունը, պրակտիկ մտածողությունը, վերլուծական կարողությունները և անկանխատեսելի իրավիճակներում որոշումներ կայացնելու կարողությունը, սեփական դատողությունների և գնահատումների կատարումը:

ԱրՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

Գիտելիքների գնահատումը (ստուգումը) պարունակում է հետևյալ բաղադրիչները՝

ա) դասընթացին ուսանողի հաճախումների գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի ակտիվության աստիճանի հաշվառում,

գ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

---

[1]Տե՛ս «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»,ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշման հավելված, հոդված 6:

դ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,
ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ուսումնական գործընթացին ուսանողի հաճախումների աստիճանի, դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի ակտիվության և ինքնուրույն աշխատանքների կատարման աստիճանի ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունավետ գնահատականի ձևավորում:

Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման հավաստիությունն ապահովվում է՝ ըստ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության (տե՛սՀավելված 3):

14. Ռեսուրսային ապահովվածությունը:

Ամբիոնի 27 դասախոսներից 9-ը հաստիքային աշխատողներ են, 18-ը՝ ժամավճարային հիմունքներով աշխատողներ: Իրավագիտության թեկնածուի գիտական աստիճան ունի 7 հոգի, 4 դասախոս ունի նաև դոցենտի կոչում:Նրանցից 2-ը հաստիքային դասախոսներ են, մնացածը՝ ժամավճարային: Վերջիններս հիմնականում պրակտիկ իրավաբաններ են՝ դատախազներ, դատավորներ, փաստաբաններ, ովքեր հիմնականում վարում են գործնական բնույթի ուսումնական դասընթացները(տե՛ս Հավելված 4): Ամբիոնը ղեկավարում է վարիչը: Ամբիոնն ունի ավագ լաբորանտի մեկ հաստիք:

Ամբիոնն ունի ուսումնական դատական նիստերի դահլիճ: Համալսարանում գործում է իրավաբանական կլինիկա, որտեղ ուսանողները ձեռք են բերում գործնական մասնագիտական հմտություններ, անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցում քաղաքացիներին: Իրավագիտության բաժնի ուսանողներին հասանելի է համալսարանում գործող համակարգչային կենտրոնը, գրադարանը: Ցանկալի է, որ համալսարանում ստեղծվի կրիմինալիստիկական լաբորատորիա, հարստացվի իրավաբանական մասնագիտական գրականությունը: Կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համալրել նաև ամբիոնի կադրային ռեսուրսը: Ամբիոնի դասախոսները հեղինակել են ուսումնամեթոդական մի քանի ձեռնարկներ, գիտագործնական մեկ մենագրություն:

15. Կրթության հետագա հնարավորությունները

Իրավագիտության բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց կրթությունը իրավագիտության մագիստրոսի կրթական ծրագրով:

II.Մասնագիտության նկարագրի ձևակերպումը

Իրավագիտության բակալավրի աստիճան շնորհվում է անձանց, ովքեր ունեն հիմնարար գիտելիք, իմացություն և կարողություններ իրավաբանի մանագիտական գործունեություն ծավալելու և/ կամ ուսումը շարունակելու համար: Իրավաբանի մասնագիտական պարտականություններն ամրագրված են ԱՀ դատական, ԱՀ քաղաքացիական դատավարության, ԱՀ քրեական դատավարության, ԱՀ վարչական դատավարության օրենսգրքերում, «Դատախազության մասին», «Ոստիկանության մասին», «Փաստաբանության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Նոտարիատի մասին» և այլ օրենքներում:

Ծրագրի ավարտին շրջանավարտին տրվում է *իրավագիտության բակալավրի որակավորում՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ:*

«Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի պատրաստումն ապահովող հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերն են՝

- «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը,
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքը,
- «ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 6-ի N 338 որոշումը,
- «ԼՂՀ–ում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կառավարության 2001թ. մարտի 6-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ Կառավարության 2011թ. հունիսի 21-ի N 410-Ն որոշումը,
- «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշումը,
- Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. սեպտեմբերի 25-ի N 656-Ն որոշումը,
- ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N277/Մ հրամանը,
- «ԱՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ Կառավարության 2017թ. դեկտեմբերի 5-ի N235-Ն որոշումը,
- ԱրՊՀ կանոնադրությունը,
- «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»/ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշումը,
- «Արցախի պետական համալսարան ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը հասատատելու մասին» 2014թ. հոկտեմբերի 7-ի N45-Լ որոշումը,
- ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը(2019-2023թթ.)

- «ԱրՊՀ բակալավրի կրթական կառուցվածքի և բովանդակության ծրագրի կարգըհաստատելումասին» ԱրՊՀգիտականխորհրդի 2019 թվականիհունիսի 28-ի N6-Լորոշումը.
- «Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումները հաստատելումասին ԱրՊՀ գիտականխորհրդի 2019 թվականիհունիսի 28-ի N5-Լ որոշումը.
- «Իրավագիտություն» մասնագիտության ուսումնական պլանը (2019-2023թթ.).

III.Նոր ծրագրի ներմուծման (կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) հիմնավորումը

Ծրագիրը ներմուծվել է՝ ելնելով ԱրՊՀ առաքելության, ռազմավարական ծրագրի դրույթներից (օրինակ՝ նպատակ 1-ի խնդիր 1.1): Այնուամենայնիվ, առկա է գոյություն ունեցող ծրագրի վերանայման անհրաժեշտություն:

Մասնավորապես, կրթական ծրագրից պետք է հանել «Իրավունքի հիմունքներ» (B07) դասընթացը, քանի որ այն չափազանց մակերեսային է իրավագիտության մասնագիտության կրթական ծրագրի համար:

Հրատապ /անգամ ուշացած/ է «Ռուսերենը՝ մասնագիտական ոլորտում» դասընթացի ներմուծումը: Իսկ դա պայմանավորված է ոչ միայն Արցախի կյանքի ներկա իրողություններով: Բանը նրանումն է, որ հայ, այդ թվում՝ արցախյան իրավունքը մտնում է ոչ թե անգլոսաքսոնական, այլ մայրցամաքային կամ եվրոպական իրավական համակարգի մեջ, որի մեջ է մտնում նաև ռուսական իրավունքը, իսկ վերջինիս ազդեցությունը հայրենական իրավունքի վրա անհնար է անտեսել կամ թերագնահատել՝ հաշվի առնելով նաև պատմական իրողությունները/դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանի՝ Ռուսական կայսրության մաս կազմելը/: Եվ պատահական չէ, որ ներկայումս անհնար է ուսանողի կողմից որևէ ինքնուրույն աշխատանքի կատարումը առանց ռուսական իրավունքին և իրավագիտությանը դիմելու:

<<Վարչական դատավարություն>> դասընթացը կամընտրական կառուցամասից անհրաժեշտ է տեղափոխել պարտադիր կառուցամաս: Վարչական դատավարությունը դատավարական իրավունքի նոր և, միաժամանակ, տեսական և գործնական չափազանց կարևոր ու արագ զարգացող ճյուղ է. նախկինում վարչական վեճերը հիմնականում ընդդատյա չէին դատարանին, քննվում էին վերադասության կարգով, իսկ դատարանին ընդդատյա խիստ սակավ քանակությամբ վեճերը կարող էին քննվել միայն քաղաքացիական դատավարության կարգով:

Նպատակահարմար է ավելացնել «Հայցային վարույթը քաղաքացիական և վարչական դատավարություններում» և «Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ» դասընթացները՝ որպես կամընտրական առարկաներ. ռեսուրսներն առկա են՝ ամբիոնի դոցենտներ Գ.Մ. Արզումանյանը և Ա.Վ. Թադևոսյանը ունեն հրատարակված համանուն մենագրություններ (2018թ.), իսկ այս փոփոխությունը ինքնատիպություն կհաղորդի բակալավրիատի մեր ուսումնական պլանին:

Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսումնական պլանում վատ չէր լինի ներմուծել <<Իրավունքը և արդարադատությունը Արցախում>> դասընթացը. համանուն մենագրությունն առկա է, հեղինակ՝ Վ. Խ. Հովսեփյան(2018թ.):

IV. Աշխատաշուկայի վերլուծություն

Մասնագիտական կոմպետենցիաների նկարագրում

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը պահանջված է աշխատաշուկայում: Ծրագրի շրջանավարտը կարող է ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալել իրավաբանի մասնագիտական գործունեություն և ստանձնել պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:

V. Մրցակցային դիրքը

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնը ԱՀ-ում միակ պետական ուսումնական հաստատությունն է, որտեղ իրականացվում է «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագիրը: Նման կրթական ծրագրեր իրականացվում են նաև «Գրիգոր Նարեկացի» և «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններում:
Ծրագիրն ավելի արդյունավետ իրականացնելու համար ցանկալի կլիներ ունենալ առանձին իրավագիտության ֆակուլտետ, մանավանդ որ այս մասնագիտությամբ ուսանողների քանակը և աշխատաշուկայի կարիքները մեծ են, սակայն ստեղծված պայմաններում ավելի նպատակահարմար է, որ ծրագիրն իրականացվի համալսարանի հենց տվյալ ֆակուլտետում՝ հաշվի առնելով ֆակուլտետի մյուս մասնագիտությունների հետ կապը:

VI.Ծրագրի նպատակները և խնդիրները

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի նպատակը և խնդիրները համահունչ են ԱրՊՀ առաքելությանը և նպատակներին: ԱրՊՀ ընդունած նպատակներն ուղղորդված են ռազմավարական ծրագրով, ըստ որի՝ կարևորվում են բարձրորակ կրթության նորագույն մոտեցումները, արդիական հետազոտությունն ու նորարարությունը:

Կրթական ծրագրի նպատակն է.

Նպատակ 1. *Պատրաստել մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով օժտված իրավաբան մասնագետ:*

Նպատակ 2. *Խթանել ուսանողների հմտությունների, կարողությունների զարգացումը:*

Նպատակ3.*Պատրաստել ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ունեցող, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող իրավաբան մասնագետ:*

VII.Փորձուսուցման կազմակերպումը

Ուսումնառության 8-րդ կիսամյակում ըստ ուումնական պլանի նախատեսված փորձուսուցումն իրականացվում է երկու փուլով՝

1. Փորձուսուցում՝ ուսումնական (4 շաբաթ), 6 կրեդիտ.
2. Փորձուսուցում՝ արտադրական(4 շաբաթ), 6 կրեդիտ:

Նախաավարտական պրակտիկան կազմակերպելու նպատակով համալսարանը համագործակցում է ԱՀ Ազգային ժողովի, դատարանների, դատախազության, քննչական կոմիտեի, Արդարադատության նախարարության, Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ձեռք են բերում գործնական հմտություններ, իրավական գիտելիքները կիրառելու կարողություններ:

VIII.Ծրագրի կրթական վերջնարդյունքները

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները

Կրթական ծրագրի վերջնարդյունքներ			
Ընդհանրական (փոխանցելի)		Մասնագիտական	
Ը1	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական նյութերի հավաքագրման,	Մ1	Պետության և իրավունքի պատմության և տեսական հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք

	ուսումնասիրման և ներկայացման կարողություն		
Ը2	Արդի գրական հայերենով գրագետ, փաստարկված, հիմնավորված, տրամաբանված բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությու�:	Մ2	Իրավական համակարգի, նորմատիվ իրավական ակտի կազմման, մեկնաբանման և կիրառման մեթոդների վերաբերյալ հիմնարար գիտելիք
Ը3	Թիմում աշխատելու ունակություն	Մ3	Իրավունքի ճյուղերի, սկզբունքների, ինստիտուտների, նորմերի և դրանց կիրառման գործընթացի վերաբերյալ մասնագիտական հիմնարար գիտելիք
Ը4	Քննական, վերլուծական և ստեղծագործական մոտեցում դրսևորելու կարողություն	Մ4	Իրավունքի ընկալման, իրավական ակտերի մշակման, մեկնաբանման ու կիրառման համար անհրաժեշտ հարակից ոլորտների գիտելիքների, մեթոդների, տեսությունների, հայեցակարգերի հիմնարար իմացություն
Ը5	Գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը	Մ5	Իրավաբանական կամ մասնագիտական այլ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մեթոդների և տեսությունների իմացություն
Ը6	Մասնագիտական ու անձնային աճը,ժամանակն ու այլ ռեսուրսները արդյունավետ պլանավորելու կարողություն, այդ թվում՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար բավարար գիտելիքների և կարողությունների տիրապետում	Մ6	Իրավական առավել հաճախ հանդիպող, առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծման համար մասնագիտական գիտելիքները կիրառելու հմտություն

Ը7	Ռուսերենի և անգլերենի(ընդհանուր և մասնագիտական) իմացություն, մասնագիտական մակարդակում հաղորդակցվելու կարողություն	Մ7	Իրավական փաստաթղթերը ինքնուրույն նախագծելու, կազմելու, մշակելու և գնահատելու, իրավասու մարմիններից պահանջելու կարողություն, փաստաթղթեր ստանալու կամ համապատասխան մարմիններին ներկայացնելու կարողություն
Ը8	Արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, զգոնությունը չկորցնելու, որոշումներ կայացնելու, առաջին օգնություն ցուցաբերելու կարողություն	Մ8	Այլ անձի կամ իրավասո ւմարմինների հետ հարաբերություններում որպես ֆիզիկական, իրավաբանական անձի կամ պետական մարմինների իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանություն իրականացնող ներկայացուցիչ հանդես գալու կարողություն
		Մ9	Իրավական ակտի մշակմանը մասնակցելու և դրա դրույթները մեկնաբանելու կարողություն
		Մ10	Օրենսդրական կամ այլ տեղեկատվություն գտնելու, մեկնաբանելու և օգտագործելու կարողություն, որն անհրաժեշտ է մասնագիտության ոլորտում խնդիր լուծելու համար
		Մ11	Օրենսդրական փոփոխություններին հետևելու և փոփոխության ենթարկված նոր իրավական դրույթները կիրառելու կարողություն
		Մ12	Արագ կողմնորոշվելու կարողություն՝ ծանոթ իրավական խնդիրների արձագանքման առումով, և դրանց վերաբերյալ փաստարկված դիրքորոշումներ կայացնելու կարողություն, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ
		Մ13	Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը

			իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ կայացնելու և բացատրելու կարողություն
		Մ14	Մասնագիտական գործունեության և(կամ) ուսումնառության ընթացքում ՏՀՏ-ներ կիրառելու հմտություն՝ իրավական առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծումն ապահովելու համար
		Մ15	Իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու կարողություն՝ հիմնավորված դատողություններ անելու համար
		Մ16	Մասնագիտական բարեվարքության /էթիկայի/ կանոններին հետևելով՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո պատասխանատվությամբ իրականացնել իրավաբանի մասնագիտական գործունեություն

Հավելված 1

«Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծություն. համադրելիությունը ԱՀ ՈԱՇ որակավորումների բնութագրին

ՈԱՇ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ	«Իրավագիտություն» մասնագիտության վերջնարդյունքները
ԳԻՏԵԼԻՔ	ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ
Մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ	•Պետության և իրավունքի պատմության և տեսական հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք •Իրավական համակարգի, նորմատիվ իրավական ակտի կազմման, մեկնաբանման և կիրառման մեթոդների վերաբերյալ հիմնարար գիտելիք •Իրավունքի ճյուղերի, սկզբունքների, ինստիտուտների, նորմերի և դրանց կիրառման գործընթացի վերաբերյալ մասնագիտական հիմնարար գիտելիք •Իրավունքի ընկալման, իրավական ակտերի մշակման, մեկնաբանման ու կիրառման համար անհրաժեշտ հարակից ոլորտների գիտելիքների, մեթոդների, տեսությունների, հայեցակարգերի հիմնարար իմացություն •Իրավաբանական կամ մասնագիտական այլ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մեթոդների և տեսությունների իմացություն

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Գիտելիքի կիրառման հմտություններ	
Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական մոտեցումներ նանհրաժեշտ են ձեռք բերած գիտելիքը և իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս	• Իրավական առավել հաճախ հանդիպող, առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծման համար մասնագիտական գիտելիքները կիրառելու հմտություն • Իրավական փաստաթղթերը ինքնուրույն նախագծելու, կազմելու, մշակելու և գնահատելու, իրավասու մարմիններից պահանջելու կարողություն, փաստաթղթեր ստանալու կամ համապատասխան մարմիններին ներկայացնելու կարողություն •Իրավական ակտի մշակմանը մասնակցելու և դրա դրույթները մեկնաբանելու կարողություն •Օրենսդրական կամ այլ տեղեկատվություն գտնելու, մեկնաբանելու և օգտագործելու կարողություն, որն անհրաժեշտ է մասնագիտության ոլորտում խնդիր լուծելու համար •Օրենսդրական փոփոխություններին հետևելու և փոփոխության ենթարկված նոր իրավական դրույթները կիրառելու կարողություն •Արագ կողմնորոշվելու կարողություն՝ ծանոթ իրավական խնդիրների արձագանքման առումով, և դրանց վերաբերյալ փաստարկված դիրքորոշումներ կայացնելու կարողություն, այդ թվում՝առաջ քաշելով հակափաստարկներ

Հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների(ՏՀՏ) և սովորողների հետ աշխատելու հմտությունները	
Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու հմտություններ	• Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներներ կայացնելու և բացատրելու կարողություն
Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու համար ՏՀՏ- ներ կիրառելու հմտություններ	•Մասնագիտական գործունեության և(կամ) ուսումնառության ընթացքում ՏՀՏ-ներ կիրառելու հմտություն՝ իրավական առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծումն ապահովելու համար
Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ՝հիմնավորված դատողություններ անելու համար	•Իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու կարողություն՝ հիմնավորված դատողություններ անելու համար
Ընդհանրական իմացական հմտություններ	
Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ՝ դրսևորելով քննադատական մտածողություն	• Քննական, վերլուծական և ստեղծագործական մոտեցում դրսևորելու կարողություն
Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելու և տարբեր	•Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական նյութերի հավաքագրման,

լուծումներ առաջադրելիս	ուսումնասիրման և ներկայացման կարողություն
ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (կոմպետենցիա)	
Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը	
Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն	•Մասնագիտական բարեվարքության /էթիկայի/ կանոններին հետևելով՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո պատասխանատվությամբ իրականացնել իրավաբանի մասնագիտական գործունեություն •Արդի գրական հայերենով գրագետ, փաստարկված, հիմնավորված, տրամաբանված բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություն: • Ռուսերենի և անգլերենի(ընդհանուր և մասնագիտական) իմացություն, մասնագիտական մակարդակում հաղորդակցվելու կարողություն
Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար	•Ունակ է աշխատելու թիմում •Արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, զգոնությունը չկորցնելու, որոշումներ կայացնելու, առաջին օգնություն ցուցաբերելու կարողություն
Որոշել հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները՝ ելնելով սեփական պահանջմունքներից	•Մասնագիտական ու անձնային աճը, ժամանակն ու այլ ռեսուրսները արդյունավետ պլանավորելու կարողություն,

	այդ թվում՝ տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար
Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը	•Գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը

Ուսումնական պլանի քարտեզ

		Մասնագիտական																Ընդհանրական փոխանցելի							
Մոդուլի կոդ	**Մոդուլի անվանում**	**Գիտելիք և իմացություն**					**Գործնական մասնագիտական կարողություններ**											Ընդհանրական փոխանցելի կարողություններ							
		Մ1	Մ2	Մ3	Մ4	Մ5	Մ6	Մ7	Մ8	Մ9	Մ10	Մ11	Մ12	Մ13	Մ14	Մ15	Մ16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ը6	Ը7	Ը8
Բ 90	Հայոց լեզու և խոսքի մշակույթ 1													*			*		*				*		
Բ 91	Հայոց լեզու և խոսքի մշակույթ 2													*			*		*				*		
Բ 01	Հայոց պատմության հիմնահարցեր 1	*			*																	*			
Բ 02	Հայոց պատմության հիմնահարցեր 2	*			*																	*			
Բ 74	Օտար լեզու 1	*	*	*	*	*																	*	*	
Բ 75	Օտար լեզու 2	*	*	*	*	*																	*	*	
Բ 92	Օտար լեզուն մասնագիտական ոլորտում	*	*	*	*	*					*	*		*									*	*	
Բ 46	Ռուսերեն 1	*	*	*	*	*																	*	*	
Բ 47	Ռուսերեն 2	*	*	*	*	*					*	*		*									*	*	
Բ 44	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ																	*					*		
Բ 51	Քաղաքացիական պաշտպանության հիմունքներ																			*		*			*

	Մոդուլի անվանում	Մ1	Մ2	Մ3	Մ4	Մ5	Մ6	Մ7	Մ8	Մ9	Մ10	Մ11	Մ12	Մ13	Մ14	Մ15	Մ16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ը6	Ը7	Ը8
Բ 71	Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն																			*	*	*			*
Բ 38	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ				*																*	*	*		
Բ 10	Փիլիսոփայության հիմունքներ	*			*																*	*	*		
Բ 11	Ֆիզդաստիարակություն																			*		*	*		
Բ 51	Տնտեսագիտության հիմունքներ				*																*		*		
Բ 07	Իրավունքի հիմունքներ																								
Բ 11	Քաղաքագիտության հիմունքներ	*			*																*	*	*		
Բ 01	Ռազմագիտության հիմունքներ																			*	*	*	*		
Բ 13	Տրամաբանության հիմունքներ				*																*	*	*		
Բ 31	Գործարարության հիմունքներ			*																*	*		*		
Բ 08	Բարոյագիտության հիմունքներ				*												*				*	*	*		
Բ 12	Մշակութաբանության հիմունքներ				*												*				*	*	*		
Բ 26	Ազգագրության հիմունքներ	*			*																*	*	*		
Բ 40	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր																					*		*	

	Մոդուլի անվանում	**Մ1**	**Մ 2**	**Մ 3**	**Մ 4**	**Մ 5**	**Մ 6**	**Մ 7**	**Մ 8**	**Մ 9**	**Մ10**	**Մ11**	**Մ12**	**Մ13**	**Մ14**	**Մ15**	**Մ16**	**Ը1**	**Ը2**	**Ը3**	**Ը4**	**Ը5**	**Ը6**	**Ը7**	**Ը8**
Բ 01	ԱՀ և ՀՀ արդարադատության համակարգ			*			*			*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 02	Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ	*		*										*	*	*	*						*		
Բ 03	Հայաստանի պետության և իրավունքի պատմություն	*								*	*			*	*		*						*		
Բ 04	Պետության և իրավունքի տեսություն 1	*	*			*	*	*						*	*	*	*						*		
Բ 05	Պետության և իրավունքի տեսություն 2	*	*			*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 06	Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 1	*												*	*	*	*						*		
Բ 09	Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 2	*															*						*		
Բ 10	ԱՀ և ՀՀ սահմանադրական իրավունք 1			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 11	ԱՀ և ՀՀ սահմանադրական իրավունք 2			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 13	Ահ և ՀՀ մունիցիպալ իրավունք			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 14	Վարչական իրավունք			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 15	Աշխատանքային իրավունք			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 16	Ֆինանսական իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 17	Քրեական իրավունք 1			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		

	Մոդուլի անվանում	Ս1	Ս2	Ս3	Ս4	Ս5	Ս6	Ս7	Ս8	Ս9	Ս10	Ս11	Ս12	Ս13	Ս14	Ս15	Ս16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ը6	Ը7	Ը8
Բ 18	Քրեական իրավունք 2			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 19	Քրեական իրավունք **3**			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 20	Քրեական իրավունք 4			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 21	Քրեական դատավարություն 1			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 22	Քրեական դատավարություն 2			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 23	Քաղաքացիական իրավունք 1			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 24	Քաղաքացիական իրավունք 2			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 25	Քաղաքացիական իրավունք 3			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 26	Քաղաքացիական իրավունք 4			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 27	Քաղաքացիական դատավարություն 1			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 28	Քաղաքացիական դատավարություն 2			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 29	Հողային իրավունք			*		*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 31	Կրիմինալիստիկա			*		*	*			*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 32	Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն	*												*			*					*	*		
Բ 30	Միջազգային իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 34	ԱՀ և ՀՀ էկոլոգիական իրավունք			*		*	*	*	*		*	*	*	*	*	*	*						*		

	Մոդուլի անվանում	Ս1	Ս2	Ս3	Ս4	Ս5	Ս6	Ս7	Ս8	Ս9	Ս10	Ս11	Ս12	Ս13	Ս14	Ս15	Ս16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ը6	Ը7	Ը8
Բ 36	Դատական հոգեբանություն				*		*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 37	Դատական բժշկություն				*	*	*	*		*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 38	Մարդու իրավունքների հիմունքներ			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*					*	*		
Բ 39	Քրեակատարողական իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 40	Ընտանեկան իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*					*	*		
Բ 60	Իրավաբանի մասնագիտական հմտություններ						*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 84	Իրավաբանական գրագրություն					*	*	*		*	*			*	*	*	*						*		
Բ 52	Վարչական պատասխանատվությունը ԱՀ-ում			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 53	Միջազգային մասնավոր իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 54	Քրեակատարողական իրավունքի էթիկա			*										*	*	*	*						*		
Բ 85	Ծառայողական իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*					*	*		

	Մոդուլի անվանումը	Ս1	Ս2	Ս3	Ս4	Ս5	Ս6	Ս7	Ս8	Ս9	Ս10	Ս11	Ս12	Ս13	Ս14	Ս15	Ս16	Ը1	Ը2	Ը3	Ը4	Ը5	Ս6	Ս7	Ս8
Բ 58	Կրիմինալոգիա			*		*				*	*			*	*	*	*						*		
Բ 44	Եվրոպական իրավունք					*		*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 77	Տեղեկատվական իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 56	Դատախազությունը ԱՀ-ում և ՀՀ-ում			*			*		*	*	*	*	*	*	*	*	*						*		
Բ 90	Մաքսային իրավունք			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*					*		
Բ 72	Վարչական դատավարություն			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*					*		
Բ 86	Օպերատիվ հետախուզական գործունեություն					*				*	*	*	*	*	*	*	*	*					*		
Բ 50	Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք			*						*				*	*	*	*						*		
Բ 87	Մարդու իրավունքների վարչական պաշտպանություն			*		*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*						*		
	Կուրսային աշխատանք-1															*							*		
	Կուրսային աշխատանք-2															*							*		
	Փորձուսուցում(արտադրական)															*				*	*	*			
	Ավարտական աշխատանք															*							*		

	Ամփոփիչ ատեստավորում																								

Հավելված 3

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանությունն ուսումնառության արդյունքներին

Ուսումնառության արդյունք	Դասավանդման մեթոդ	Ուսումնառության մեթոդ	Գնահատման մեթոդ
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն			
Ա1. Պետության և իրավունքի պատմության և տեսական հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք	•Դասախոսություն-զրույց •Դասախոսություն-խորհրդատվություն •.Գործնական պարապմունք-անհատական աշխատանք •Գործնական պարապմունք-խմբային աշխատանք	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն •Ինքնուրույն աշխատանք *•Մասնագիտական եզրույթների տեղեկատու բառարանի կազմում* *•Հարցում-քննարկում* *•Առաջադրանքի վերլուծություն* *•Իրավիճակային խնդիրների լուծում*	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Ա2. Իրավական համակարգի, նորմատիվ իրավական ակտի կազմման, մեկնաբանման և կիրառման մեթոդների վերաբերյալ հիմնարար գիտելիք	•Դասախոսություն—խորհրդատվություն •Դասախոսություն-քննարկում • Դասախոսություն -վերլուծություն • Գործնական պարապմունք-քննարկում/խմբային և անհատական/	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն •Ինքնուրույն աշխատանք *•Հարցում-քննարկում* *•Առաջադրանքի վերլուծություն* *•Իրավիճակային խնդիրների լուծում*	• Ընթացիկ ստուգում /բանավոր-գրավոր հարցում/
Ա3. Իրավունքի ճյուղերի, սկզբունքների, ինստիտուտների, նորմերի և դրանց կիրառման գործընթացի վերաբերյալ	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-	•Տեսական նյութի մշակում և վերլուծություն •Թեմատիկ վերլուծություն	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում

մասնագիտական հիմնարար գիտելիք	ամփոփում/, որի ընթացքում կարող են օգտագործվել պրակտիկայից վերցված կոնկրետ գործերով կայացված դատական ակտեր, ցուցանմուշներ, նախապես ծանոթանալ հանձնարարված գրականությանը, նախադեպային որոշումներին, այնուհետև՝ հաջորդ դասախոսությունների ընթացքում, անցկացնել քննարկում: •Թեստային առաջադրանքների կազմում •Եվրադատարանի վճիռների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, /ԱՀ Գերագույն դատարանի/ վերաբերելի դատական ակտերի վերլուծություն և քննարկում •Խնդրահարույց հարցերի, վերաբերելի նախադեպային որոշումների վերլուծություն •Բանավիճային հարցադրումներ •Դատախաղերի կազմակերպում	•Մասնագիտական եզրույթների տեղեկատու բառարանի կազմում •Հարցում-քննարկում •Առաջադրանքի վերլուծություն •Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավիճակային խնդիրների լուծում	•Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
U4. Իրավունքի ընկալման, իրավական ակտերի մշակման, մեկնաբանման ու կիրառման համար անհրաժեշտ հարակից ոլորտների գիտելիքների, մեթոդների, տեսությունների, հայեցակարգերի հիմնարար իմացություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/: •Դասախոսություն/երկկողմանի. «Դասախոսում է ուսանողը» •Թեստային առաջադրանքների կազմում • Թեմատիկ վերլուծություն •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն •Ինքնուրույն աշխատանք *•Հարցում-քննարկում* *•Առաջադրանքի վերլուծություն* • Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում

	•Բանավիճային հարցադրումներ •Հարց-պատասխան		
U5. Իրավաբանական կամ մասնագիտական այլ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մեթոդների և տեսությունների իմացություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/, որի ընթացքում կարող են օգտագործվել դատական պրակտիկայից վերցված կոնկրետ գործերով կայացված դատական ակտեր, ցուցանմուշներ: •Թեստային առաջադրանքների կազմում • Թեմատիկ վերլուծություն •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Բանավիճային հարցադրումներ •Հարց-պատասխան	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն •Ինքնուրույն աշխատանք *•Հարցում-քննարկում* • Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
U6. Իրավական առավել հաճախ հանդիպող, առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծման համար մասնագիտական գիտելիքները կիրառելու հմտություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/: •Թեստային առաջադրանքների կազմում • Թեմատիկ վերլուծություն •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Հարց-պատասխան	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում, • Իրավիճակային խնդիրների լուծում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Բ.Գործնականմասնագիտական կարողություններ			
U7. Իրավական փաստաթղթերը ինքնուրույն նախագծելու, կազմելու, մշակելու և գնահատելու, իրավասու	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/: •Թեստային առաջադրանքների	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի

մարմիններից պահանջելու կարողություն, փաստաթղթեր ստանալու կամ համապատասխան մարմիններին ներկայացնելու կարողություն	կազմում •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Հարց-պատասխան	•Իրավական փաստաթղթերի կազմում , • Իրավիճակային խնդիրների լուծում	պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
*U8.*Այլ անձի կամ իրավաստ ւմարմինների հետ հարաբերություններում որպես ֆիզիկական, իրավաբանական անձի կամ պետական մարմինների իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանություն իրականացնող ներկայացուցիչ հանդես գալու կարողություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/: •Դասախոսություն/երկկողմանի. «դասախոսում է ուսանողը» •Թեստային առաջադրանքների կազմում • Թեմատիկ վերլուծություն •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Հարց-պատասխան	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում , • Իրավիճակային խնդիրների լուծում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
U9. Իրավական ակտի մշակմանը մասնակցելու և դրա դրույթները մեկնաբանելու կարողություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/,: •Թեստային առաջադրանքների կազմում •Եվրադատարանի վճիռների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, /ԱՀ Գերագույն դատարանի/ վերաբերելի դատական ակտերի վերլուծություն և քննարկում •Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Խնդրահարույց հարցերի,	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում , • Իրավիճակային խնդիրների լուծում •Թեստային առաջադրանքների կազմում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում

	վերաբերելի նախադեպային որոշումների վերլուծություն •Բանավիճային հարցադրումներ		
Մ 10. Օրենսդրական կամ այլ տեղեկատվություն գտնելու, մեկնաբանելու և օգտագործելու կարողություն, որն անհրաժեշտ է մասնագիտության ոլորտում խնդիր լուծելու համար	•Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Խնդրահարույց հարցերի, վերաբերելի դտտական նախադեպային որոշումների վերլուծություն •Հարց-պատասխան	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում , • Իրավիճակային խնդիրների լուծում •Թեստային առաջադրանքների կազմում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Մ11. Օրենսդրական փոփոխություններին հետևելու և փոփոխության ենթարկված նոր իրավական դրույթները կիրառելու կարողություն	•Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում , • Իրավիճակային խնդիրների լուծում •Թեստային առաջադրանքների կազմում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում

*Ս12.*Արագ կողմնորոշվելու կարողություն՝ ծանոթ իրավական խնդիրների արձագանքման առումով, և դրանց վերաբերյալ փաստարկված դիրքորոշումներ կայացնելու կարողություն, այդ թվում՝առաջ քաշելով հակափաստարկներ	• Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն •Հարց-պատասխան	•Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավական փաստաթղթերի կազմում ,	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Ս13. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ կայացնելու և բացատրելու կարողություն	•Բանավիճային հարցադրումներ •Հարց-պատասխան	• Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավիճակային խնդիրների լուծում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Ս14. Մասնագիտական գործունեության և(կամ) ուսումնառության ընթացքում	• Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն	• Անհատական աշխատանքի ներկայացում •Իրավիճակային	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի

ՏՀՏ-ներ կիրառելու հմտություն՝ իրավական առանձին բարդություն չներկայացնող խնդիրների լուծումն ապահովելու համար	•Բանավիճային հարցադրումներ •Հարց-պատասխան	խնդիրների լուծում • Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն	պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Մ 15. Իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու կարողություն՝ հիմնավորված դատողություններ անելու համար	•Եվրադատարանի վճիռների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, /ԱՀ Գերագույն դատարանի/ վերաբերելի դատական ակտերի վերլուծություն և քննարկում • Առաջադրանքների կատարման ստուգում և վերլուծություն	• Ներկայացում (խմբային և անհատական)՝ ըստ խմբի և անհատի առաջարկի •Իրավիճակային խնդիրների լուծում • Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
*Մ16.*Մասնագիտական բարեվարքության /էթիկայի/ կանոններին հետևելով՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո պատասխանատվությամբ իրականացնել իրավաբանի մասնագիտական գործունեություն	•Դասախոսություն/զրույց, քննարկում-խորհրդատվություն-ամփոփում/: •Բանավիճային հարցադրումներ •Հարց-պատասխան	• Անհատական աշխատանքի ներկայացում • Խմբային աշխատանքի ներկայացում •Իրավիճակային խնդիրների լուծում	•.Բանավոր-գրավոր հարցում •Ինքնուրույն աշխատանքի խմբային գնահատում •Թեստային գնահատում/ընտրովի պատասխան, կարճ հարց-պատասխան/ •Առաջադրանքների անհատական ստուգում, խմբային գնահատում
Ընդհանրական փոխանցելի կարողություններ			
Ը1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական նյութերի հավաքագրման, ուսումնասիրման և ներկայացման կարողություն	•.Գործնական պարապմունք-անհատական աշխատանք •Գործնական պարապմունք-խմբային աշխատանք	•Հանձնարարականների կատարում • Աշխատանքի վերլուծություն •Գործնական առաջադրանքների կատարում և	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում

		վերլուծություն •.Տրված մասնագիտական նյութի համակարգում, աղյուսակագրում, դասակարգում, սխեմաների կազմում, տեսողական-ճանաչողական նյութի պատրաստում	
Հ2. Արդի գրական հայերենով գրագետ, փաստարկված, հիմնավորված, տրամաբանված բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունն:	•.Գործնական պարապմունք-անհատական աշխատանք •Գործնական պարապմունք-խմբային աշխատանք	•Գործնական առաջադրանքների կատարում և վերլուծություն	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում
Հ3. Թիմում աշխատելու ունակություն	•Դասախոսություն-զրույց	• Առաջադրանքի վերլուծություն • Խմբային աշխատանքի ներկայացում	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում
Հ4. Քննական, վերլուծական և ստեղծագործական մոտեցում դրսևորելու կարողություն	•Դասախոսություն-խորհրդատվություն	•Թեստային առաջադրանքների կազմում •Գործնական առաջադրանքների կատարում և վերլուծություն •Բանավիճային հարցադրումներ	
Հ5. Գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և	•Դասախոսություն-զրույց	• Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն.	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես

պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը		• Անհատական աշխատանքի ամփոփում/թեմատիկ շնորհանդես/	•Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում
Հ6. Մասնագիտական ու անձնային աճը,ժամանակն ու այլ ռեսուրսները արդյունավետ պլանավորելու կարողություն, այդ թվում՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար բավարար գիտելիքների և կարողությունների տիրապետում	•Դասախոսություն-խորհրդատվություն	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն • Թեմատիկ վերլուծություն • Հարցում-քննարկում • Առաջադրանքի վերլուծություն • Անհատական աշխատանքի ամփոփում/թեմատիկ շնորհանդես/	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում
Հ7. Ռուսերենի և անգլերենի(ընդհանուր և մասնագիտական) իմացություն, մասնագիտական մակարդակում հաղորդակցվելու կարողություն	•.Գործնական պարապմունք-անհատական աշխատանք •Գործնական պարապմունք-խմբային աշխատանք	• Տեսական նյութի մշակում և վերլուծություն • Մասնագիտական եզրույթների տեղեկատու բառարանի կազմում • Հարցում-քննարկում • Առաջադրանքի վերլուծություն	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում
Հ8. Արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, զգոնությունը չկորցնելու, որոշումներ կայացնելու, առաջին օգնություն ցուցաբերելու կարողություն	•Դասախոսություն-խորհրդատվություն •.Գործնական պարապմունք-անհատական աշխատանք •Գործնական պարապմունք-խմբային աշխատանք	•Առաջադրանքի վերլուծություն • Հանձնարարականի կատարում՝ մշակում-վերլուծություն.	•Բանավոր և գրավոր հարցում •Ընտրած նյութի հրապարակային ներկայացում՝ շնորհանդես •Ինքնուրույն աշխատանքի անհատական գնահատում

Հավելված 4

Ռեսուրսայինապահովվածությունընստկրթականծրագրի
(դասախոսական կազմ)
Իրավագիտության ամբիոնի կադրային ներուժը

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հաս տիք	Պաշտոն	Գիտակ անաս տիճան	Գիտակ անկոչու մ	Ծնող. տար եթիվ	ԱրՊՀ-ում աշխ. ստաժ	Բազային կրթությունը	մասնագիտացվածությունը /գիտական աստիճանը, դասիչը/
	ԱրզումանյանԳրետա Միքայելի		Ամբիոնի վարիչ, դոցենտ	իր.գ.թ	դոցենտ	1953	1994	ԵՊՀ, իրավագիտություն	
	Օհանյան Շուրա Սուրենի		դասախոս	-	-	1949		ԵՊՀ իրավաբ. ֆակ., սովետական շինարարության բաժին	
	Առուստամյան Ռիտա Սերգեյի		դոցենտ	իր.գ.թ .	դոցենտ	1964	1997	ՍտՎՄԻ, պատմության ուսուցիչ	
	Զաքարյան Սոսի Հրանտի		դասախոս	-	-	1987	2008	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Գևորգյան Տաթև Արմենի		դասախոս	-	-	1990	2013	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Աղաբեկյան Վաղարշ Սերգեյի		ասիստենտ	-	-	1990	2018	ԵՊՀ, ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Դանիելյան Արմինե Արմենի		դասախոս	-	-	1993		ԱրՊՀ, իրավագիտության մագ.	

	Ավանեսյան Յանա Մելսիկի		ասիստենտ	-	-	1994	2020	ԵՊՀ,ԱրՊՀ իր. մագ.	
	Ամիրյան Սեյրան Գրիգորիի	*համա տեղ.*	ավագ դասախոս	-	-	1946		ԵՊՀ, իրավագիտություն	
	Իսկանդարյան Յաշա Եգորի	*համա տեղ.*	ասիստենտ	-	-	1950	2006	ԵՊՀ, իրավագիտություն	
	Դանիելյան Արարատ Աշոտի	*համա տեղ.*	ավագ դասախոս	իր.գ.թ.	-	1958		ԵՊՀ, իրավագիտություն	
	Խաչատրյան Հասմիկ Պարֆիոնի	*համա տեղ.*	ավագդասախոս	-	-	1963		ԵՊՀ, իրավագիտություն	
	Հարությունյան Հասմիկ Արտյուշայի	*համա տեղ.*	ավագդասախոս	-	-	1976		ԵՊՀ, իրավագիտություն	
	Գրիգորյան Գայանե Ավետիսի	*համա տեղ.*	դասախոս	-	-	1977	2020	ԵՊՀ, իրավագիտություն	
	Աբրահամյան Հրայր Արտեմի	*համա տեղ.*	ավագ դասախոս	-	-	1979		ԵՊՀ, իրավագիտության մագ.	
	Գրիգորյան Ալիսա Ռոբերտի	*համա տեղ.*	դասախոս	-	-	1979	2009	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	

	Թադևոսյան Անատոլի Վլադիմիրի	համա տեղ.	դոցենտ	իր.գ.թ.	դոցենտ	1980	2008	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Արզումանյան Էրիկ Ալեքսեյի	համա տեղ.	ասիստետ	իր.գ.թ.	-	1981	2018	«Գրիգոր Նարեկացի» համալսարան , իրավագիտության մագ.	
	Առստամյան Տիգրան Վլադիմիրի	համա տեղ.	ավագ դասախոս	իր.գ.թ.	-	1981	2009	ԵՊՀ, իրավագիտության մագ.	

	Հակոբյան Դավիթ Էդիկի	համա տեղ.	դասախոս	-	-	1982	2009	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Զաքարյան Տաթևիկ Աշոտի	համա տեղ.	դասախոս	-	-	1983		ԱրՊՀ, իրավագիտության բակ.	
	Պետրոսյան Արայիկ Համլետի	համա տեղ.	ասիստենտ	-	-	1984	2020	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Ներսիսյան Գուրգեն Գառնիկի	համա տեղ.	դասախոս			1985	2015	ԱրՊՀ, իրավագիտության մագ.	
	Սուլեյմանյան Լուսինե Սանթուրի	համա տեղ.	ասիստենտ	-	-	1990	2021	ԱրՊՀ, իրավագիտության	

								մագ.	
	Ներսեսյան Լուիզա Վաչագանի	*համա տեղ.*	ասիստենտ	-	-	1997	2020	ԱրՊՀ, Քրեական իրավունքի և դատավարության մագ.	

Ուսումնաօժանդակ կազմը

	Դանիելյան Նաիրա Վալերիկի		ավագ լաբորանտ	-	-	1987	2019	ԱրՊՀ, քիմիայի և կենսաբանության ուսուցիչ	